*Հավելված* **N 1**
**ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/12 ծածկագրով**
գնանշման հարցման **հրավերի**

**ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***
**գնանշման հարցմաննմասնակցելու**

<<Ալեռտո>> ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ -ի կողմից **ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/12** ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 49-րդ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

<<Ալեռտո>> ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
հայաստանի հանրապետության ռեզիդենտ:

<<Ալեռտո>> ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02686862
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@alerto.am
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ
- հեռախոսահամարն է՝ 0037498 28-29-38

Սույնով _<<Ալեռտո>> ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է **ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/12** ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում. [1]

2) **ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/12** ծածկագրով գնանշման հարցմանն մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ <<Ալեռտո>> ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) <<Ալեռտո>> ՍՊԸ –ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս <<Ալեռտո>> ՍՊԸ -ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

---

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<վերջինս կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| Ստեփան Բաղդասարյան Ալեքսանի | Նույնականացման քարտ 010691426 տրված 26,10,2018, 011-ի կողմից | |

Կից ներկայացվում է <<Ալեռտո>> ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

<<Ալեռտո>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բաղդասարյան

Կ. Տ.

Digitally signed by BAGHDASARYAN STEPAN 1604860219
Date: 2021.04.21 15:18:27 AMT

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:
** Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: